

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է առնի լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր ըստին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՎԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(26-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴՐԻ

ՓԵՏՐՎԱՐԹՅՈՒՆ «ՄՇԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ ԲԱՅԻ ՏՈՆ ԵՒ ՏՈՆԵՐԻՆ ՅԱՋՈՐԻ

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եոթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿ»-ը գրվել կարելի է ԽՐԱՎԱՐԱՏԱՆԸ (Բաղրատայա և Բարսեղիայա փողոցների անկիւն):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ»-ը գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, редакция „МШАКЪ“, իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Յայտարարութիւններ ընդունվում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով:
Բառերն ընդունվում է 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յարմար առիթ. — ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տիգրան Չուսանեան. Մեծամարտութիւն և պատիւ, Նամակ Պետերբուրգից. Նամակ Բագուից. Նամակ Զանգեզուրից. Նամակ Խմբագրութեան, Ներքին լուրեր. — ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Քիւրքիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱՅԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մէլքէ աղջիկը:

ՅԱՐՄԱՐ ԱՌԻԹ

Մենք մի երկու անգամ շեշտեցինք, որ Խաչատուր Աբովեանի մահան 50-ամեայ տարեկարճը հարկաւոր է յիշատակել մի օր և է բարի գործով: Այժմ մի յարմար առիթ է լուսնային և ներկայանում յարգել Վէրք Հայաստանի վէպի հեղինակի յիշատակը:

Մենք արդէն հաղորդեցինք, որ մեր բա-

նաստեղծ Սմբատ Շահապիզ բանակցութիւններ է սկսել հայոց Բարեգործական ընկերութեան խորհրդի հետ՝ գրականագէտներին նպաստելու համար մի գրական ֆոնդ կազմելու մասին և ընկերութեան խորհուրդը համակրութեամբ է վերաբերվել այդ առաջարկութեան: Այժմ իմանում ենք, որ Սմբատ Շահապիզ արդէն ուղարկել է խորհրդին իր յօդուհանի ժամանակ հաւաքած 8000 ռուբլին, և մասնացոյց անելով այն ահագին նշանակութեան վրա, որ ունեն հայոց գրականութեան համար Խաչատուր Աբովեան և Ստեփանոս Նազարեան, ցանկութիւն է յայտնել, որ հիմնվել գրական ֆոնդը կոչվի «Աբովեան»՝ Նազարեան ֆոնդ՝ հայ կարծող գրականագէտներին օգնելու համար: Ս. Շահապիզ կարծում է, որ հայ հասարակութիւնը անտարբեր չի վերաբերվի այդ համակրելի մտքին և նուէրներով միջոց կը տայ իրա-

գործել գրական ֆոնդը, որի տոկոսները ամեն տարի կը տրվեն կարծող հայ գրականագէտներին:

Նակատեմ, այդպիսի մի ֆոնդ կազմելու համար 8000 ռուբլին շատ աննշան գումար է. ուստի հայոց հասարակութիւնը, որ ցոյց է տուել իր յարգանքը մեր բանաստեղծին, գնելով նրա արամագրութեան տակ այդ գումարը, մի շատ լաւ գործ արած կը լինի, որ ձաղաքը տարով այն համակրելի մտքին, որին յատկացրած է այդ գումարը և դրանով արժանաւոր կերպով յիշատակած կը լինի թէ՛ Աբովեանին և թէ՛ Ստեփանոս Նազարեանին, որոնք մեզ վրա այնքան երախտիք ունեն:

Մի քանի ժամանակ առաջ մեզանում խօսում էին մի ընկերութիւն կազմելու մասին, որի նպատակը գրական գործիչներին օգնելը պիտի լինէր: Խօսեցին և լուսնային: Բայց դա չէ նշանակում թէ՛ գրականագէտներին օգնելու կարիքը վերացել է: Այժմ պ. Շահապիզ շատ պարզ լուծում է տուել հարցին: Ցատուկ ընկերութեան կարիքը չը կայ. Բարեգործական ընկերութիւնն էլ կարող է յատուկ գումար պահել այդ նպատակով: Հայոց հասարակութեան միջնում է շտապել աւելացնել այն գումարը, որ արդէն գրված է իբրև հիմք «Աբովեան» Նազարեան ֆոնդին:

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԱՆ ԶՈՒՀԱՃԵԱՆ

Ձմեռանկայից մեզ հաղորդում են, որ յայտնի հայ երաժշտագետ Տիգրան Չուսանեան վախճանվեց մարտի 10-ին, 62 տարեկան հասակում: Կ. Պօլի «Մասիս» լրագիրը հետեւեալն է գրում հանդուգեալի մասին. «Չուսանեան երեսուն տարեկի լի վեր Պօլսոյ մէջ միակ հայը եղած է, որ երաժշտական կարեւոր երկեր հեղինակած ըլլայ:

- Դուռն է...
- Դուռն... Չէ, դուռն է մի խեղճ աղջկայ համար, պատասխանեց նա ծիծաղելով:
- Քեզանից էլ խեղճ... էլ ինչու ցոյց տուին թեղ:
- Նաղուն նախ ձեռքով բացասական նշան աւրաւ և ապա հանդարտ արտասանեց.
- Ես խեղճ չեմ, ինձ համար դժուարութիւն չը կայ... Նայիր ինձ, միթէ չես տեսնում:
- Եւ նա հարկադրեց, որ պառաւ լաւ տնտղէ իրան, անդադար կրկնում էր այդ հարցը: Փէլին նայում էր, խորին ուշադրութեամբ դիտում էր այդ նիսար դէմքը, բոլորովն աչքերը, որոնց մէջ այժմ մի չար ինքնակատահութիւն էր երևան եկել: Ուրիշ մի բան չը նկատեց պառաւը և ասաց.
- Դու նոյն Նաղուն ես...
- Եւ Նաղուն ծիծաղեց ու սկսեց ծաղրել Փէլին աչքերը:
- Դու լաւ չես տեսնում, դու ձեռքից ես և այս ծրագին էլ շատ բարակ լոյս ունի: Բայց եթէ տեսնէիր ինչի կան իմ մէջ... Ես—հակա եմ. Մէլք—Աւանի կը գցեմ ոտի տակ, Սիւլէյ—ման—բէկին իմ էջը կը շինեմ, իսկ Մանսուր ձեռքից մէջ է, մի անգամ փչեմ, հոգին կը տայ... Օ՛հ, որքան մեծացայ այս բանի օրը... Տեսնում ես...
- Փէլին ամաչեց այդ խօսքերից, համալացաւ որ Նաղուն էլի կատարել է: Նոյն կասկած է մը—նում: Անա նա տեղից վեր թռաւ, երկու անգամ պոռոյտ արաւ, հեռաց և ապա ցատկեց ու ընկաւ Փէլին գլխից: Պառաւ դէմ հրեց նրան և նորից շօշափեց մեռնող հիւսիսներին: Դրանով ցոյց էր տալիս, որ այժմ չէ կարող գլուխ դնել մի խնդրի հետ: Նաղուն չըբեց նրա առաջ և ասաց.
- Լսիր, ես գործ ունեմ թեղ մօտ: Էգուց երկրորդան իմ մայրը լոյս աշխարհ դուրս կը գայ... Ուրում ես:
- Ո՛վ չի ուղի:

և գնահատած թէ՛ տեղացիներին և թէ՛ օտարներին: Իր գլխաւոր երկերն են, բաղմաթիւ անշատ կտորներէ և երգերէ զատ, երկու դաշնեղ, որոնցմէ «Ջեմիլէն» ներկայացված է և երեք «Օպերա-կոմիք», որոնք ներկայացված են թէ՛ Պօլսոյ մէջ և թէ՛ դաւառները: Չուսանեան Խաչատուր մէջ ունած է նուագադրութեան արուեստը և իր հեղինակութեանց մէջ երևան եկած է իբր տաղանդաւոր երաժիշտ: Իր անունը անցած է Ֆրանսա հրատարակած Նրա ժիշտի երգութեան գիրքին մէջ, ուր գովեստով կը յիշուի: Իբր դաշնակի և երգի դասախօս, աղջկային վարժարաններու մէջ երաժշտութեան ճաշակը մշտնջողներուն գրեթէ առաջինը եղած է: Երաժիշտ հեղինակին մասը ցաւալի կորուստ մըն է մեր ազգին համար:

Չուսանեան մեռել է աղքատութեան մէջ: Ներքին լուրք է միւլտիմիալ Աղքատներն ընկերութիւնը, «մեծ շուքով»: Միշտ մի և նոյնը. մահ աղքատութեան մէջ և փառաւոր թաղում...:

ՄԵՆԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏԻՒ (ՎԵՐՋ)

Ապետականութեան և աւատականութեան թողած զգալութիւն ժառանգութիւնը—ճարտութիւնը, անդիմութիւնը, խիստ և քստմեկի բարքերը, տարածիլի անարգարութիւնը ջնջելու համար հարկաւոր եղաւ, որ եւրօպական գրեթէ բոլոր ազգերը անգլիկ յեղափոխութիւնների ենթարկվին, միլիոնաւոր մարդկանց արեւը թափվի, թաղաւորները գլխաւորեան, հազարի ցնդուհներ առաջ գան. հարկաւոր եղաւ, որ ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը տեղի ունենայ. բայց ոչ այդ բոլորը, ոչ էլ 19-րդ դարի անգլիկ կուստուրան դեռ չը կարողացան բոլորովն արմատախիլ անել ժառանգակալից մարդկութեան սրտից ասպետական բարքերի և հասկացողութիւնների սերմերը. ժառանգակալից մարդկութիւնը դեռ շարունակում է սխալ և թիւր գաղափար ունենալ պատւի զգացումի մասին և կարծում է թէ՛ այդ զգացումի վերաւորանքը կարելի է սրբել մեծամարտութեան միջոցով:

- Բայց նրա տեղ մի ուրիշը պիտի գնայ: Օգնիր ինձ...
- Ո՛վ պիտի գնայ...
- Այս անգամ մի բախտաւոր... Վերջապէս հերթը հասաւ բախտաւորներին...
- Ո՛վ է:
- Մէլքի աղջիկը... Քեզոս—Մուխտարը իմ մօրը փոխում է նրա հետ: Փէլին տարածափառ նայեց Նաղուն անողորմ դէմքին:
- Դու ուղում ես, որ իմ մայրը աղաւթի, շարունակեց նա, ուշադրութիւն չը դարձնելով պառաւի այդ ցնցման վրա:—Որ այդպէս է, վաղը երեկոյեան դու կը գնաս ինձ հետ: Մենք ուրիշ գործ չունենք, միջը այն կը լինի, որ դուրս կը կանչենք բախտաւորին, և յետոյ...
- Յետոյ ինչ:
- Մենք գործ չունենք, փախցնողները գլխաւոր թէ՛ ինչ պիտի անեն: Ես կը գնամ իմ մօր ետեկից և կը բերեմ նրան... Ա՛հ, միայն կը դամբ, լացն ու ծիծաղը կը խառնենք ճանապարհին...
- Նա յոգնածի պէս կանգ առաւ, երկար չունչ բաշեց... Ապա հիացած վերադարձաւ իր մըտքին, որ յափշտակել էր նրան:
- Երեկոյեան վերջապէս հարկաւոր եկան մարդկանց և կարող են ապրել... Մուխտարը մի կատարեալ դէ է, բայց այս րօպէին մեր ձեռքում է... Առանց մեղ ոչինչ չէ կարող անել: Մի ժամանակ Նաղուն խնդրէր, ծիծաղ էր յարուցանում, երբ ուղում էր իմանալ թէ՛ ուր է իր մայրը: Այժմ նրա ետեկից ման եմ դալի...
- Եւ դու կանես այդ բանը:
- Նաղուն տատիկ ծիծաղեց: Որքան միամիտ էր այդ պառաւը: Նոր է հարցնում...
- Ես խօսք տուել եմ և վաղը երեկոյեան մենք կը գնանք...
- Խօսիր միայն բո մասին:
- Դու չես ուղում, ես այդ սկզբից նկատեցի: Բայց դու գլխում քո երկրորդ տակ իմ մայրը մի ուրիշ յոյս չունի...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵԼԻԹԻ ԱՂԶԻԿԸ

Այժմ ճրագ էլ կար Փէլին անակում: Հին, սե ամանում լնացած ձէթի մէջ խաղաղ այրվում էր բարակ պատրոցը, դեղին լոյսեր սփռելով մի անկողնի վրա, որի մէջ պառկած էին երեք հիւսիսները: Չայն, չարժողութիւն չը կար այդտեղ. վերմակը, կարծես, սառել էր, քարացել. ճրագը իր տխուր փափկոյնների կարծես, խորին ուշադրութեամբ հետևում էր թէ՛ ինչ է անում մահը: Փէլին երբեմն չըբէջը առաջ էր անցնում, ձեռքը մօտեցնում էր հիւսիսների բերանին ու թիւն և միայն այդ ժամանակն էր հասնում, որ դեռ չունչ կայ: Բայց մօտենում էր վերջին ժամը, և պառաւը, իբրև արթուն պահապան, սպասում էր, աչք չէր փոքում, որպէս զի այդ ժամը իրան անպատրաստ չը գրտնէ... Փախել խեղճ որբերի աչքերը, մի բանի խօսք արտասանել աշխարհից հեռացողների վրա, մի քանի կաթիլ արտասանելով թրջել նրանց երկար ճանապարհը, խնդրել Աստուծու քաղցր դատաստանը—ահա ինչու էր նա սպասում: Դա պարտք էր, նրա սիրած պարտքը. և ճրագի դժուար լոյսերը ցոյց էին տալիս թէ՛ որպիսի լըջութեամբ է նա պարտաստում այդ պարտքը կատարելու... Վաղուց անցել էր նրա քնի ժամը, բայց նա սպասում է, անդադար սպասում: Երբեմն սեռեակի աջ անկիւնից բարձրանում են խուլ հեկեկանքներ և խանդարում են գերեզմանային լուսնիւնը: Դա արտասանողներից կուրացած պառաւ կինն է: Այն բարեբար ձեռքը, որ ճրագ էր վառել այս քանդակած անակում, դիպել էր և այդ թշուառին. նա այժմ ծածկել էր իր հին մօրը, փախվել էր մի հին վերմակի մէջ և քնած պիտի լինէր, բայց քունն էլ

